ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ՌՈՒԶԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԲԺՇԿԱԿԱՆ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ

Հիմնաբառեր. *կոգնիտիվ վերլուծություն, բժշկական փոխաբերություն, տնտեսագիտական դիսկուրս, ֆրեյմ, սլոթ*

Հոդվածը նվիրված է հայեցակարգային փոխաբերությունների ճանաչողական վերլուծությանը տնտեսական դիսկուրսում: Ուշադրության կենտրոնում բժշկական փոխաբերությունն է. տնտեսագիտությունը առողջ / հիվանդ օրգանիզմ է: Առանձնացված ֆրեյմները կոչված են ցուցադրելու ճանաչողական վերլուծության օգտագործման արդյունավետությունը տնտեսական դիսկուրսում՝ հայեցակարգային փոխաբերությունների հետազոտության ժամանակ:

RUZANNA HARUTYUNYAN

MORBIAL METAPHOR IN ECONOMIC DISCOURSE

Key words: *cognitive analysis, morbial metaphor, economic discourse, frame, slot*

The article is devoted to the cognitive analysis of conceptual metaphors in economic discourse. The focus is on the morbial metaphor: economy is a healthy / huge body. The selected frames are designed to demonstrate the effectiveness of the use of cognitive analysis in the study of conceptual metaphors in economic discourse.

ՍԻՐԱՆՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Քիմ. գիտ. թեկնածու, ՀՊՏՀ

ԱՆՁԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնաբառեր. *էկոլոգիական անվտանգություն, էկոլոգիական իրավիճակ, էկոլոգիական հավասարակշռություն, ազգային անվտանգություն, էկոլոգիական կուլտուրա, ազգային էկոհամակարգ, էկոլոգիական աշխարհայացք, էկոլոգիական գիտակցության ձևավորում*

Էկոլոգիական անվտանգության հարցը անմիջականորեն շաղկապված է մարդու հիմնական վիճակի՝ բնական անարատ միջավայրում ապրելու իրավունքի հետ: Էկոլոգիական դաստիարակության մշակույթը, ինչպես նաև ծագող հարցերի բարեհաջող լուծումը հիմնականում կախված են մարդու իմացությունից:

Էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման համար մեծ նշանակություն ունեն համապատասխան կրթությունը և դաստիարակությունը, որոնց հիմքը էկոլոգիական գիտելիքները, մշակույթը և էթիկան են:

Էկոլոգիական անվտանգությունը սոցիալ-տնտեսական և ռազմապաշտպանական ներուժի, արտաքին քաղաքական, ժողավրդագրական, հոգևոր-մշակութային և այլ հիմնատարրերի շարքում դրանցից ոչ պակաս ազգային անվտանգության կարևորագույն գումարելին է:

Էկոլոգիական անվտանգության հարցը շաղկապված է մարդու հիմնական իրավունքի՝ բնական անարատ միջավայրում ապրելու իրավունքի հետ:

Քաղաքակրթության անվտանգությունն սկսվում է մեր բարդ ժամանակներում ապրող առանձին անհատի անվտանգությունից:

Միջուկային և սովորական զենքերը, որոնք իբրև թե կոչված են պաշտպանելու մարդուն արտաքին ագրեսիայից, արդեն վաղուց լուրջ վտանգ են ներկայացնում ոչ միայն հնարավոր թշնամու, այլև սեփական ժողովրդի համար: Բնության հաշվեկշռի խախտումը կարող է հանգեցնել նաև երկրներում ու տարածաշրջաններում հարաշարժ հավասարակշռության խախտման:

Երկրի անվտանգությանն սպառնացող էկոլոգիական իրավիճակի համար անհանգստանալու հիմքեր կան: Վերջին տասնամյակում այն կտրուկ վատացել է: 1988 թ. աղետալի երկրաշարժի, պատերազմական վիճակի, բնօգտագործման, տարրերային ու անարդյունավետ գործունեության հետևանքով խոցելի է դարձել մեզ շրջապատող բնությունը, որը շարունակաբար է թալանվում ու աղքատանում է, անգութ ու ծանրաբեռնված շահագործման հետևանքով նվազում են առանց այն էլ սակավ արոտավայրերը, թույլ է ընդերքի շահագործման ոլորտում տեղ գտած չարաշահումների դեմ պայքարը:

Քանի որ էկոլոգիական հավասարակշռության խախտումը մոտենում է վտանգավոր սահմանին, ելնելով առողջ միջավայրում ապրելու՝ անհատի սահմանադրական իրավունքից և, ընդհանրապես, ժողովրդի գոյատևման պահանջներից, հրամայական է դարձել ազգային անվտանգության շահի պահպանումը:

Ստեղծված իրավիճակներում բնապահպանությունը պետք է համարել համաժողովրդական գործ՝ դրանում լայնորեն ներգրավելով հասարակությանը, կատարելագործել բնապահպանական իրազեկվածության դրվածքը՝ ստեղծելով անձի էկոլոգիական դաստիարակության և կրթության արդյունավետ համակարգ:

Ազգային անվտանգության ապահովմանն առնչվող էկոլոգիական ոլորտում պետության գործունեության գերակայելի խնդիրները պետք է լինեն՝

- բնօգտագործման և վերահսկման մարմինների գործառույթների համակարգումն ու բաժանումը,
- բնական ռեսուրսների խելամիտ օգտագործումը, բնակչության էկոլոգիական կուլտուրայի բարձրացումը, կրթությունն և դաստիարակությունը,
- արտադրական և այլ կարգի վթարները նվազագույնի հասցնելը,
- անվտանգ արտադրությունների ստեղծումն ու ներդրումը:

Անհրաժեշտ է մշակել և իրականացնել գոյապահպանության, արդյունաբերության, գյուղատնտեսության, առևտրի, զբոսաշրջության, քաղաքաշինության և այլ ոլորտներն ընդգրկող, ազգային մեր առանձնահատկությունները հաշվի առնող՝ շրջակա միջավայրի

պաշտպանության և բնական ռեսուրսների տնտեսական գնահատման և արդյունավետ օգտագործման երկարաժամկետ ծրագրեր, որոնք ազգային անվտանգության հրամայական են[1]:

Էկոլոգիական կուլտուրայի դաստիարակումը, էկոլոգիական հարցերի լուծման հաջողությունը մեծապես կախված են զանգվածային լրատվության միջոցներից, շրջակա միջավայրի վիճակի մասին ճշգրիտ տվյալների տիրապետումից, դրանց համամատչելիությունից: Անհրաժեշտ է հասարակությանը լայնորեն ներգրավել որոշումների մշակման և իրականացման գործում: Հանրապետության էկոլոգիական վիճակի հարցերն առաջիկայում իրենց արտացոլումը պետք է գտնեն նաև կարևորագույն գիտատեխնիկական հիմնախնդիրների լուծմանն ուղղված նպատակային համալիր ծրագրում, հատկապես, քիմիական նյութերի արտադրության նոր եղանակների ստեղծումն ու ներդրումը, էներգետիկայի զարգացումը, վնասատուներից, հիվանդություններից բույսերի և կենդանիների պաշտպանությունը, մարդու և շրջակա միջավայրի համար անվտանգ քիմիական միջոցների արտադրությունը և օգտագործումը, ինչպես նաև Սևանա լճի ջրային ռեսուրսների օգտագործումը բարելավելու և պահպանելու գիտատեխնիկական հիմունքների մշակումը ու համապատասխան միջոցառումների կիրառումը[2]:

ՀՀ արտադրության մեջ անհրաժեշտ է ներդնել վտանգավոր նյութերի արտահոսքը կանխելու, թափոնները վնասազերծելու և օգտագործելու եղանակներ: Ազգային էկոհամակարգի կենսունակությունը մեծապես կախված է ժողովրդի կուլտուրայից:

Լուրջ քայլեր պետք է ձեռնարկել արդյունաբերական ձեռնարկությունների, ավտոտրանսպորտի, բնակարանային կոմունալ տնտեսության օբյեկտների կողմից վնասակար նյութերի՝ մթնոլորտ կատարվող արտանետումները նվազեցնելու ուղղությամբ:

Միաժամանակ, պետք է իրականացնել արմատական միջոցառումներ քիմիական արտադրության, էներգետիկայի և էլեկտրաֆիկացման, հանքային պարարտանյութերի արտադրության, շինանյութերի արդյունաբերության և այլ ճյուղերի վերագործարկվող ու նորաստեղծ ձեռնարկություններում առանձին արտադրությունների տեխնիկական վերազինման հաշվին վնասակար նյութերի արտանետումները կրճատելու նպատակով:

Կարևորվում են անձի էկոլոգիական կրթությունն ու դաստիարակումը՝ որպես ընդհանուր կրթության և լուսավորվածության կարևոր բաղադրամաս:

Էկոլոգիական դաստիարակությունն ու կրթությունն անհատի ձևավորման կարևորագույն բաղադրամասն են, որով անձը դաստիարակվում է շրջակա միջավայրի նկատմամբ ունեցած ճիշտ վերաբերմունքի պահանջներով[3]:

Հատկապես մեր ժամանակներում հսկայական նշանակություն է ստանում աճող սերնդի՝ բնության, շրջակա միջավայրի պահպանման, դրա խելացի օգտագործման, վերարտադրման բնական նորմերով դաստիարակումը:

---

[1] ՀՀ էկոլոգիական իրավունք, նորմատիվային ակտերի ժողովածու, Եր., 2004:

[2] Гирусов Э.В., Широкова И.Ю., Экология и культура.

[3] Глазичев С.Н., Экологическая культура и оброзование, очерки истории, теории и практики, М., 1997.

Էկոլոգիայի բնագավառում պետական մակարդակով նախատեսվող տեխնիկա-տնտեսական ձեռնարկումներն առանց ժողովրդի համապատասխան լուրջ դաստիարակության և կրթության անհնար է իրագործել: Սրան կարելի է հասնել միայն բնապահպանական կուլտուրայի ձևավորմամբ, որը պետք է ներառի բնության խոցելիության, գենետիկական փոխադարձ կապերի կորստյան անդառնալիության, շրջակա միջավայրի վիճակից մարդու ապագայի կախվածության մասին հարուստ տեղեկություններ:

Այսօր, հատկապես էկոլոգիական - ճգնաժամային իրավիճակում, անձի կողմից բնության գիտական ճանաչողության խորացումն ու փիլիսոփայական իմաստավորումը պահանջում են շրջակա միջավայրի հանդեպ վերաբերմունքի փոփոխում:

Մարդը վաղուց է զբաղվում կենսոլորտի առանձին տարրերի վերափոխմամբ: Նրա ներթափանցումը ինքնակարգավորվող կենսոլորտի համակարգ, որը ձևավորվել է միլիոնավոր տարիների ընթացքում, նրանից պահանջում են առանձնահատուկ դիտարկումներ, շրջակա միջավայրի անվտանգությունը երաշխավորող կանխատեսման մեծ հնարավորություններ: Ահա թե ինչու, բնապահպանական կրթության և դաստիարակության հետագա խթանումը դառնում են օրվա հրամայականներ:

Այսպիսով՝ կրթության և դաստիարակության ռազմավարական նպատակը պետք է լինի էկոլոգիական աշխարհայացքի ձևավորումը, որի հիմքում էկոլոգիական գիտելիքներն են, մշակույթն ու վարքականոնը:

Ընտանիքում, նախադպրոցական հիմնարկներում հարկավոր է երեխաների մեջ սերմանել սեր բնության հանդեպ, իսկ դպրոցում և բուհում ուսումնասիրվող բոլոր առարկաներն անխտիր պետք է զինված լինեն էկոլոգիական գիտելիքներով:

Էկոլոգիական գիտակցության ձևավորումն ունի նաև բարոյական ենթատեքստ: Հասարակության հումանիստական վերաբերմունքում տնտեսական նոր հիմքի վրա տեղի է ունենում լուրջ փոփոխություն, որը հատուցում է նրա և բնության փախհարաբերության ձևերի բարոյական կարգավորման անհրաժեշտությունը: Բնության հետ շփումը մեծագույն դեր է կատարում մարդու հոգեկան, բարոյական զարգացման և նրա ներաշխարհի ձևավորման գործում, մեծապես նպաստում մարդու ունակությունների զարգացմանը[1]:

Բնապահպանական հաշվեսխալները հաճախ հանգեցնում են էկոնոմիկայում ձևախեղումների, նույնիսկ՝ փլուզման, քաղաքական բախումների, ազդում են մարդկանց վարքի վրա[2]:

Առանց մշտական տեղեկատվության, առանց ճշգրիտ գիտելիքների մենք չենք կարող ցանկալի ձևով բարձրացնել մարդկանց էկոլոգիական մշակույթի և բարոյականության մակարդակը, ապահովել հասարակության առաջընթացը:

Բնության և հասարակության փոխհարաբերությունների, աշխարհագրական միջավայրի գնահատման համար անառարկելի նշանակություն ունի հոգեբանական գործոնը: «Բնություն - անհատ» համակարգի վերլուծությունը հնարավորություն է ընձեռում շրջակա միջավայրի որակի մասին առավել իրական տեղեկատվություն ստանալու: Հոգեբանա-

---

[1] Ս.Մ.Շահինյան, Ն.Կ. Թահմազյան, Էկոլոգիա, Եր., 2002:

[2] Гирусов Э.В., Широкова И.Ю., Экология и культура, М., 1989.

կան գործոնի հաշվառմամբ հստակ ուրվագծվում են պատմական անցյալի ու արդիականության էկոլոգիական դասերը: Այս կապակցությամբ ծագող հարցերը բազմազան են: Այդ մասին շատ է գրվել Չեռնոբիլի, Սպիտակի երկրաշարժի առիթներով, որոնք նոր իմաստ են հաղորդել աղետների հետ կապված հոգեբանական հետազոտություններին. ինչպե՞ս են մարդիկ, մարդկանց խմբեր իրենց պահում բնական և այլ աղետների դեպքում, նախքան դրանց տեղի ունենալն ու աղետներից հետո, այս երևույթներից որոնք են առավել վտանգավոր թվում, և ինչո՞ւ է անտեսվում վտանգը՝ աղետյալ ու հնարավոր աղետի շրջաններում մնալով, ի՞նչ դեպքում է կատարվում բնակչության տեղաշարժ, աղետների շրջանից: Այս և նման բազմաթիվ հարցերի պատասխանները հնարավորություն կտան լավ ըմբռնելու և յուրացնելու էկոլոգիական դասը՝ միջավայրի որակի բարելավման, պետական միջոցառումների ձեռնարկման նպատակով: Էկոլոգիական հետազոտությունների հոգեբանական գործոնի հաշվառումը կօգնի աղետալի երևույթների դեմ պայքարի միջոցառումներ ձեռնարկելուն, դրանց նախապատրաստելուն, կանխելուն, անցանկալի հետևանքները վերացնելուն:

Գիտական և գործնական մեծ հետաքրքրություն ունեն մարդկանց հոգեբանությունն ու վարքը մարդածին և բնածին պատճառներով հարուցված էկոլոգիական աղետների ընթացքում ու դրանցից հետո: Այդ վարքագիծը կախված է գիտելիքների մակարդակից, լարված իրավիճակի հանգեցնող պատճառների և իրադարձությունների ըմբռնումներից: Բնության ներդաշնակ կերտումը, խեղաթյուրումից զերծ պահելը նույնպես էկոլոգիական կուլտուրայի բաղադրիչներից են:

СИРАНУШ АРУТЮНЯН

ЭКОЛОГИЧЕСКАЯ КУЛЬТУРА ЛИЧНОСТИ И ЗАДАЧИ БЕЗОПАСНОСТИ

Ключевые слова: *экологическая безопасность, экологическая ситуация, экологический баланс, экологическая культура, национальная экосистема, экологическое мировоззрение, формирование экологического сознания*

Вопросы экологической безопасности непосредсвенно связаны с основным правом человека жить в первозданной чистоте.

Воспитание экологической культуры, успешное решение экологических вопросов, в основном зависит от осведомленности человека: Жизнеобеспечение национальной экосистемы в основном зависит от культуры народа. Для формирования экологического мировоззрения большое значение имеют образование и воспитание, основу которого составляют экологические знания, культура и этика.

SIRANUSH HARUTYUNYAN

THE ECOLOGICAL CULTURE OF THE PERSON AND THE PROBLEMS OF THE SABETY

Key words: *environmental safety, ecological situation, ecological Balance, ecological culture, national ecosystem, ecological worldview, formation of ecological consciousness*

The question of Inviroment security is connected with the major right of a man – the eight of living in natural pure invironment. The training of invironment culture, -the success of solving the invironmental questions, immensly depends upon people's awareness and culture.

The strategic goal of education and training should be the formation of the invironment mentality, which is based upon the environment know ledge, culture and ethics.

ՌՈՒԶԱՆՆԱ ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԱրՊՀ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *մարդկային կապիտալ, տնտեսական աճ, առողջական վիճակ, կրթական մակարդակ, ժողովրդագրական իրավիճակ, արտագաղթ, աշխատանքի շուկա, կրթված գործազրկություն*

Հոդվածում դիտարկվում են ԱՀ-ում մարդկային կապիտալի արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները, ներկայացվում երկրում առողջապահության և կրթական մակարդակը բնութագրող հիմնական ցուցանիշները, կատարվում համեմատական վերլուծություններ և հիմնավորվում մրցունակ աշխատուժի և բարձրակարգ մասնագետների պատրաստման անհրաժեշտությունը երկրի տնտեսության բարգավաճման և տնտեսական անվտանգության ապահովման տեսանկյունից:

Հոդվածում ներկայացվում է նաև Արցախի աշխատանքի շուկային բնորոշ առանձնահատկություններից մեկը՝ «կրթված գործազրկությունը», որը բացատրվում է կրթական համակարգի և աշխատանքի շուկայի միջև գործող թույլ կապով:

Ժամանակակից տնտեսության ամենահրատապ հիմնախնդիրներից է մարդկային կապիտալի արդյունավետ օգտագործումը: Երկրում մարդկային կապիտալի զարգացումն առաջին հերթին կապված է կայուն տնտեսական աճի ձեռքբերման հետ: Արցախի Հանրապետությունում վերջին 10 տարվա ընթացքում ապահովվել է կայուն տնտեսական աճ,